

## Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ 2017-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2019ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (փաստաթղթային կոդ՝ Կ-601-05.05.2020-SՀ-011/0)  
ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	«Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» օրենքի 12-րդ հոդվածի «բ» ենթակետի 2-րդ պարբերություն	<p>1. «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» օրենքի 12-րդ հոդվածի «բ» ենթակետի 2-րդ պարբերության համաձայն՝ «Պետական գույքի մասնավորեցման ծրագրի կատարման մասին հաշվետվությունը պետք է բովանդակի՝</p> <p>- հաշվետու ժամանակաշրջանում ծրագրում նշված նպատակների իրագործման աստիճանը.»:</p> <p>Հարկ է նկատել, որ Նախագծով ներկայացված «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի կատարման 2019 թվականի տարեկան հաշվետվության» մեջ ծրագրում նշված նպատակների իրագործման աստիճանի վերաբերյալ նշում առկա չէ: Հաշվետվության 3-րդ կետից հետո ավելացել նոր՝ 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ</p>	Ընդունվել է:	Ընդունվել է:

			կետեր:		
2.	ՀՀ կառավարություն	Հաշվետվության 1-ին կետ	<p>Հաշվետվություն 1-ին կետից առաջարկում ենք հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը:</p> <p>Առաջարկը վերաբերվում է նաև Հաշվետվության ամբողջ տեքստում հղում կատարված օրենքների վերնագրերին:</p> <p>Հաշվետվության 1-ին, 3—րդ, կետերում, 8-րդ կետի 1-ին, 2-րդ, և 3-րդ ենթակետերում, 12-րդ կետում, 16-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում հղում կատարված օրենքների վերնագրերից հետո հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը:</p>	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	Հաշվետվության 4-րդ կետ	<p>Հաշվետվության 4-րդ կետի 1-ին ենթակետում «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության» բառերն առաջարկում ենք փոխարինել «առողջապահության նախարարության» բառերով՝ 2-րդ հոդվածը:</p> <p>Առաջարկը վերաբերվում է նաև Հաշվետվության 4-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերում և 12-րդ կետի 7-րդ ենթակետում նշված պետական մարմինների անվանումներին:</p> <p>՝Հաշվետվության 8-րդ կետի 1-ին, 2-րդ, և 3-րդ ենթակետերում, 16-րդ կետի 7-րդ ենթակետում նշված պետական մարմինների անվանումներից առաջ հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը:</p>	Ընդունվել է:	Ընդունվել է:

4.	ՀՀ կառավարություն	Հաշվետվության ամբողջ տեքստում	Հաշվետվության մեջ նշված «ՓԲԸ», «ՍՊԸ» «հազ.», «ԱՄՆ», «ՀՀ» հապավումները ամրագրել ամբողջական տարբերակով, իսկ «դրամ» բառից առաջ գրել ««հայկական» բառը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
5.	ՀՀ կառավարություն	Հաշվետվության ամբողջ տեքստում	Հաշվետվության ամբողջ տեքստում «Հայաստանի Հանրապետության կառավարության» բառերը համապատասխան հոլովաձեւերով փոխարինել «Կառավարության» բառով	Ընդունվել է:	Ընդունվել է:
6.	ՀՀ կառավարություն	Հաշվետվության 16-րդ կետի 1-ին ենթակետ	Հաշվետվության 16-րդ կետի 1-ին ենթակետում նշված «ծրագիր» բառն գրել մեծատառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
7.	ՀՀ կառավարություն	Հաշվետվության 12-րդ կետի 7-րդ ենթակետ	Հաշվետվության 12-րդ կետի 7-րդ ենթակետում նշված «Հայաստանի Հանրապետության կառավարության 10.10.2019թ. թիվ 1402-Ա որոշման» ձեւակերպումն առաջարկում ենք փոխարինել «Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 1402-Ա որոշման» ձեւակերպմամբ:	Ընդունվել է:	Ընդունվել է:
8.	ՀՀ կառավարություն	Հաշվետվության	Հաշվետվության՝  1. 9-րդ կետում «ուղղակի վաճառքի ձևով» բառերը փոխարինվել են «դասական աճուրդով» բառերով, համաձայն Հավելված 1-ի տեղեկատվության:  2. Հավելված 2-ի 6-րդ տողում «Պարտավորությունը չի կատարվել:» բառերից հետո լացվել է «Հայց է ներկայացվել դատարան:» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է: